ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

(ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 23.11.2017 թ.,

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

Արմեն Մատինյանը, Արտյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Վահե Դոխոյանը և Արման Ափինյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը :

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը;

Նիստից բացակայում էին՝

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը*:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11:10-ին նիստը հայտարարեց բացված:

Մինչ նիստի օրակարգին անցնելը, համայնքի ղեկավարը և ավագանու անդամները շնորհավորեցին *Արկադի Փելեշյանին* համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել ավագանու հերթական նիստի օրակարգը:

Կողմ՝ 19, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2011 թվականի թիվ 21 որոշումն իր փոփոխություններով ուժը կորցրած ճանաչելու մասին
զեկ.՝ *Ա.Հովհաննիսյան*

2. «Վանաձորի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
զեկ.՝ *Կ.Պառավյան*

3. Վանաձոր համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողակտորների նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
զեկ.՝ *Ս.Աբովյան*

4. Բաբկեն Մխիթարյանին տարածք հանձնելու մասին
զեկ.՝ *Վ.Դավիթավյան*

5. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին
զեկ.՝ *Մ.Ասլանյան*

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2011 թվականի թիվ 21 որոշումն իր փոփոխություններով ուժը կորցրած ճանաչելու մասին

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ *Ա.Հովհաննիսյանը*

Պարզաբանումներ ստանալու նպատակով զեկուցողին հարց ուղղեց ավագանու անդամ *Գայանե Քալանթարյանը*

Պարզաբանումներ ներկայացրեց զեկուցողը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Կոմունալ տնտեսության, բնակֆոնդի և համատիրությունները համակարգող բաժնի պետ *Կ. Պառավյանը*

Ավագանու անդամ *Արմեն Մատինյանն* առաջարկեց հետագայում փոխել ՀՈԱԿ-ի անվանումը:
Ավագանու անդամ *Սեյրան Ղամբարյանն* առաջարկեց հետագա ծրագրային բնույթ տալ քաղաքային գերեզմանոց տանող երկրորդ ճանապարհի կառուցման աշխատանքներին և փնտրել ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ:

Զեկուցողին տեղեկություն ստանալու նպատակով հարց ուղղեց ավագանու անդամ *Վահագն Ավագյանը*:

Առաջարկները դրական մեկնաբանեց նիստը վարողը:
Պարզաբանում ներկայացրեց զեկուցողը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

3.ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողակտորների նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ *Ս. Աբովյանը*

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Բաբկեն Մխիթարյանին տարածք հանձնելու մասին

-Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ *Վ.Դավիթավյանը:*

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

-Զեկուցեց համայնքի ղեկավար, նիստը վարող Մամիկոն Ասլանյանը

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել դեկտեմբերի 20-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 19 կողմ, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆԸ